

Կանադայի հայոց թեմում

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գանատահայոց թեմի առաջնորդարանի դիւանը այսու կը տեղեկացնէ, որ թեմիս 25-րդ պատգամաւորական ժողովը գումարուեցաւ Մայիս 30-31-ին, Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ:

Ժողովը, թեմի Ծրագիր Կանոնագրի համաձայն, ներկայութեամբ 40 պատգամաւորներու, երկրորդ անգամ լինելով, գանատահայոց թեմի առաջնորդ վերընտրեց Գերաշնորհ Տ. Բագրատ եպս. Գալստանեանը:

Ընտրութիւնէն անմիջապէս ետք, թեմի հոգեւոր հովիւները եւ եկեղեցւոյ «Կոմիտաս» դպրաց դաս-երգչախումբը, թափօր կազմած, նորընտիր առաջնորդ Սրբազան Հայրը առաջնորդեցին եկեղեցի, ուր կատարուեցաւ Հրաշափառի արարողութիւն: Հրաշափառի արարողութիւնէն ետք, առաջնորդ Սրբազան Հայրը իր անդրանիկ պատգամն ուղղեց ներկայ հաւատացեալներուն եւ պատգամաւորներուն: Պատգամի սկզբնաւորութեան, Սրբազան Հայրը, որդիական խորին զգացումներով իր երախտագիտութիւնը յայտնեց Ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ աղօթելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանութեան եւ Վեհափառ Հայրապետի առողջութեան եւ արեւշատութեան համար: Այնուհետեւ, Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց թեմի հոգեւոր հովիւներուն եւ պատգամաւորներուն, գանատահայոց թեմի առաջնորդի բարձրագոյն պաշտօնը իրեն վստահելու համար, իսկ վերջաւորութեան, քաջալերեց ներկաներուն շարունակել կառչած մնալ Հայ Եկեղեցւոյ եւ քրիստոնէական արժէքներով հարուստ հայ ինքնութեանը:

ԴԻԴԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ